

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.12.2016 թ. թիվ 48 որոշմամբ

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ 2016թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....	8
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 8	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	10
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	12
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....	13
4. ՀԶԾ ֆինանսավորում .....	<b>Error! Bookmark not defined.</b>
5. ՀԶԾ մոնիթորինգ .....	<b>Error! Bookmark not defined.</b>

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համազյուղացիներ

Ներկայացնում եմ Մարգահովիտ համայնքի զարգացման ծրագիրը:

Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական խնդիրներն են՝ համայնքի բնակչության մի մասի սոցիալապես վատ պայմանները:

ա/ հաճախակի տեղացող անձրևների, կարկուտի պատճառով գյուղացիները կորցնում են բերքի մեծ մասը.

բ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Լոռու մարզի Մարգահովիտ համայնքը հիմնադրվել է մ.թ. 997թ.: Այն գտնվում է մարզկենտրոնից 18 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք: Բուսականությամբ փարթամ ու կենդանական աշխարհով հարուստ անտառները, սառնորակ աղբյուրները կանաչազարդ ձորակները հմայում են գյուղ այցելողներին և հովելներին: Փամբակի լեռնաշխաթայի հյուսիսային լանջերից սկիզբ է առնում Աղստև գետը: Անձրևները հաճախակի են և հորդառատ, դիտվում է կարկուտ: Օդի բացարձակ խոնավության տարեկան մեծությունը կազմում է 8,2 մբ: Ձմեռը խստաշունչ է, տևում է 5-6 ամիս, ինչը խոչընդոտ է անասնապահությամբ զբաղվող բնակչության համար: Համայնքի հողերը ձևավորվել են 1600-2000 մ սարահարթերում ու մասնատված լեռնալանջերի շրջանում: Շրջակա միջավայրը մարզում և հանրապետությունում լավագույններից է էկոլոգիապես մաքրության, մաքուր օդի ու ջրի, հանգստի գոտիների առումով: Համայնքը մեծ ներուժ ունի էկոտուրիզմի զարգացման (լեռնագնացություն, ձիերով զբոսանք, վայրի հատապտուղների և դեղաբույսերի հավաքում) համար:

Բնակչության 30-40%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում:

Համայնքի բնակչության առկա թիվը՝ 3864

այդ թվում՝

0-1 տարեկան – 42

1-6 տարեկան- 281

6-17 տարեկան- 430

18-22 տարեկան – 246

23-45 տարեկան- 1321

46-62 տարեկան- 1042

63 և ավելի – 426

Բնակչության սոցիալական կազմը՝

այդ թվում՝

թոշակառուներ – 505

միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 15

հայրենական պատերազմի մասնակիցներ- 2

հաշմանդամներ – 115

որից՝

0-18 տարեկան	-9
աշխատանք ունեցողներ	- 178
ընտանիքների (ծխերի) թիվը	-1170
փախստականներ	- 1

## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 83.7 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 18,2 մլն դրամ (21.7%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ, հազ.
Կոոպերատիվ /կազմավորման փուլում/	1	
Խանութներ	10	220.0
Քարի վերամշակման արտադրամաս	1	-
Հեղուկ վառելիքի և սեղմված գազի առևտուր	2	300.0

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	145 հա	2200 տ
կաղամբ	8 հա	80 տ
բանջարեղեն	3.5 հա	տ
միս		180տ
բուրդ		5 տ
ծու		400.0 հազ. հատ
մեղր		2.0տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	2103
Այդ թվում կովեր	1048
Մանր եղջերավոր անասուններ	1925
Այդ թվում մայրեր	1125
խոզեր	320
Այդ թվում մայրեր	45

թռչուններ	4520
Այդ թվում հավեր	2250
մեղվաընտանիքներ	381

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 350 աշակերտ:

Դպրոցն ունի 57 աշխատող:



- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում են 60 երեխա:

Նախակրթարանն ունի 11 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ «Առողջության կենտրոն» ՊՓԲ-ը, որն սպասարկում է 4 համայնքների 4084 բնակիչների:

« ԱԿ»-ում աշխատում են 15 աշխատողներ:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են ընտանիքներ - 213,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է :
- Մարգահովիտ համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձանները և նրանց նկարները բերված են ստորև՝



### 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

\*\*\*\*\*

### 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն

#### 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Մարզահովիտ համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
- .բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
- . ֆինանսի բացակայությունը

1) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

- .մշակութային կյանքի պասիվությունը,

2) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

- .գործազրկությունը,

3) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

- .սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

4) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝  
.համայնքաբնակների աղքատությունը,

5) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- .միջհամայնքային, ներհամայնքային և դաշտափջյան ճանապարհների քայքայված վիճակը,
- .հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,
- .ճանապարհային նշանների բացակայությունը



6) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

- .քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
- .սեյսմիկ գոտում գտնվելը,
- .աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,
- .համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

7) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .որակյալ սերմի բացակայությունը,
- .սպառման շուկայի դժվար հասանելիությունը,
- .երիտասարդների արտագնա աշխատանքի մեկնելը,

8) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

- .հեղեղատարների բացակայությունը,

9) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Մարգահովիտ համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից,
- .գովազդի բացակայությունը,
- .տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

10) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գործարար միջավայրի բացակայությունը,
- .ձեռնարկությունների բացակայությունը,
- .երիտասարդների միգրացիան,

11) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .երիտասարդների չամուսնանալը,
- .երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
- .պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

12) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

- .բնակչության իրազեկվածության պակասը, բուժ-գործիքների պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը, ջեռուցման բացակայությունը

13) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

14) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

15) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

## 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	Համայնքի թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բնակիչները պատրաստակամ են ընդգրկվել և մասնակցել համայնքային ծրագրերին:</li> <li>✓ Համայնքի ղեկավարը տեղեկանում է բնակիչների խնդիրներին, առկա է համագործակցություն:</li> <li>✓ Ավագանու անդամները խրախուսում են բնակիչների ակտիվությունը և մասնակցում են քաղաքացիների ընդունելությանը:</li> <li>✓ Համայնքի ղեկավարը իրազեկում է բնակչությանը ՏԻՄ գործունեության մասին:</li> <li>✓ Համայնքում առկա են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հատուկ պայմաններ:</li> <li>✓ Համայնքային ծրագրերը քննարկվում են, բնակիչներն իրազեկվում են ծրագրերի վերաբերյալ:</li> <li>✓ Համայնքային կարևորագույն հարցերը ՏԻՄ-ը քննարկում է հիմնականում ավագանիների նիստերի ձևով ժողովների կամ այլ մասնակցային ձևաչափերով:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Բնակիչները ամբողջ ծավալով իրազեկված չեն բյուջեի հնարավորություններին, ինչի արդյունքում նաև անիրատեսական պահանջներ են ներկայացնում ղեկավարությանը:</li> <li>✓ Բնակիչները մեծամասաբ տեղեկացված չեն խորհրդակցական մարմնի առկայության և գործունեության վերաբերյալ:</li> <li>✓ Խորհրդակցական մարմնի գործունեությունը կրում է ֆորմալ բնույթ:</li> <li>✓ Ավագանու անդամների հետ բնակչության հանդիպումները առավելապես կրում են ոչ պաշտոնական բնույթ:</li> <li>✓ Բնակչությունը տեղյակ չէ ՏԻՄ գործունեության մասնակցության կարգին:</li> <li>✓ Համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի քննարկումը կազմակերպված բնույթ չի կրում:</li> <li>✓ Համայնքի բնակիչների պասիվություն, նախաձեռնողականության պակաս համայնքային կյանքին մասնակցելու գործում և որոշումների կայացման գործընթացներում:</li> <li>✓ Համայնքում մատուցվող</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բնակիչները վստահում են ՏԻՄ-ին:</li> <li>✓ Ավագանու նիստի որոշումները հրապարակվում են տեղական մամուլով և կայքով:</li> <li>✓ Համայնքի ղեկավարը բնակիչների բարձրացրած հարցերը օրակարգի հարցերի տեսքով ներկայացնում է ավագանու քննարկմանը:</li> <li>✓ Համայնքն ունի խորհրդակցական մարմին:</li> <li>✓ Ավագանու նիստի օրակարգի նախագիծը նիստից 7 օր առաջ տրամադրվում է ավագանու անդամներին:</li> <li>✓ Համայնքի կայքի և թերթի առկայություն:</li> <li>✓ Տեղական բյուջեից համայնքի հիմնախնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների ներգրավում, հաջողված փորձի առկայություն:</li> <li>✓ Որոշակի հիմնախնդիրների լուծման նպատակով տեղի են ունենում հանդիպումներ ավագանիների հետ:</li> <li>✓ Արդյունավետ գործող անտառտնտեսություն:</li> <li>✓ Տեղական գործող կաթի արտադրություն:</li> <li>✓ Համայնքում մատուցվող կրթամշակութային ծառայությունները որակյալ են (նախադպրոցական, միջնակարգ և արտադպրոցական, գրադարան և մշակութային կյանք):</li> <li>✓ Հեռահաղորդակցման արդիական միջոցների հասանելիություն (հեռախոսակապ, ինտեռնետային կապ և փոստային ծառայություններ):</li> <li>✓ Համայնքային հիմանդրամի առկայություն:</li> <li>✓ Ճանապարհատրանսպորտային հաղորդակցության բարելավման միտում:</li> <li>✓ Տեղական, բնական հումքով արտադրության պոտենցիալ:</li> <li>✓ Ընտանեկան բժշկության համակարգի հասանելիություն համայնքում:</li> </ul>	<p>առողջապահական ծառայությունների սպեկտրը սահմանափակ է, նյութատեխնիկական բազան մաշված:</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքում սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողության պակաս:</li> <li>✓ Համայնքը մարզկենտրոնին կապող տրանսպորտի մաշվածություն:</li> <li>✓ Ներհամայնքային ճանապարհները անբարեկարգ են:</li> <li>✓ Հանգստի և ժամանցի կազմակերպման ենթակառուցվածքների սակավություն:</li> </ul>
--	---

<ul style="list-style-type: none"> <li>✓ Գյուղատնտեսությունը մեքենայացված է:</li> <li>✓ Արտավայրերի, խոտհարքների և վարելահողերի առկայություն:</li> <li>✓ Համայնքում գործող հասարական կազմակերպություններ:</li> <li>✓ Համագործակցություն տեղական և միջազգային հասարակական և դոնոր կազմակերպությունների հետ:</li> <li>✓ Համայնքում գործող եկեղեցու առկայություն:</li> </ul>	
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Սպառնալիքներ</i></p>
<ul style="list-style-type: none"> <li>✓ Ծնունդով մարգահովիտցի և դրսում ապրող համագյուղացիների ներդրումը համայնքի զարգացման գործում:</li> <li>✓ Միջազգային ֆինանսավորման ծրագրեր, դրամաշնորհներ:</li> <li>✓ Համայնքային զարգացման աջակցության ծրագրեր, կազմակերպություններ:</li> <li>✓ Բարենպաստ աշխարհագրական դիրք, ամառանոցային բնակլիմայական պայմաններ:</li> <li>✓ Մերձավորություն մարզկենտրոնին և Դիլիջանին, որը զարգացող տուրիստական կենտրոն է:</li> <li>✓ Տուրիզմի զարգացման հեռանկարը Հայաստանում:</li> <li>✓ Համատեղ տնտեսությունների ձևավորման, կազմակերպման միտում Հայաստանում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ . Գյուղատնտեսության համար անբարենպաստ կլիմայական պայմաններ:</li> <li>✓ Արտագաղթի խոշոր ծավալները:</li> <li>✓ Տարածաշրջանային և ներպետական սոցիալ-տնտեսական իրավիճակի ազդեցությունը:</li> </ul>

### 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

#### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

***Մարգահովիտցին օրինապահ և նախաձեռնող քաղաքացի է, ով պատասխանատու է իր համայնքի բարօրության համար: Համայնքը բարեկարգ է, գրավիչ, դինամիկ զարգացող,***

**ներգործուն՝ տեղական և միջազգային ասպարեզներում: Մարգահովիտը ազգային, հոգևոր և բարոյական արժեքներով առաջնորդվող համայնք է:**

### **3.1.1 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

#### **Ռազմավարական նպատակ 1-ին**

Նպաստել Մարգահովիտ համայնքի ֆինանսական ռեսուրսների կառավարման կատարելագործմանը:

**Ռազմավարական խնդիր 1.1** Ընդլայնել Մարգահովիտ համայնքի համագործակցությունը տեղական և միջազգային հիմնադրամների, դոնոր կազմակերպությունների հետ:

**Ռազմավարական խնդիր 1.2** Զարգացնել միջոցների հայթայթման կարողությունները Մարգահովիտ համայնքում:

**Ռազմավարական խնդիր 1.3** Մարգահովիտ համայնքում խթանել տեղական արտադրությունը:

#### **Ռազմավարական նպատակ 2-րդ**

Խթանել Մարգահովիտ համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքային հիմնահարցերի լուծման գործընթացներում:

**Ռազմավարական խնդիր 2.1** Աջակցել քաղաքացիական նախաձեռնությունների իրականացմանը Մարգահովիտ համայնքում:

**Ռազմավարական խնդիր 2.2** Ամրապնդել Մարգահովիտ համայնքի ՏԻՄ-ի և բնակիչների միջև կապը:

**Ռազմավարական խնդիր 2.3** Խթանել Մարգահովիտ համայնքի ՏԻՄ-ի և հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական ոչ ֆորմալ խբերի միջև համագործակցությունը:

#### **Ռազմավարական նպատակ 3-րդ**

Նպաստել Մարգահովիտ համայնքի գյուղատնտեսության զարգացմանը:

**Ռազմավարական խնդիր 3.1.** Աջակցել համայնքում դաշտավարության զարգացմանը: /գյուղտեխնիկայի ձեռքբերում/

**Ռազմավարական խնդիր 3.2.** Աջակցել համայնքում անասնապահության զարգացմանը:

*/հանդամիջյան ճանապարհների վերականգնում, հեռահար արոտավայրերի օգտագործում/*

**Ռազմավարական նպատակ 4-րդ**

Նպաստել համայնքում զբաղվածության հնարավորությունների ընդլայնմանը:

**Ռազմավարական խնդիր 4.1** Մարգահովիտ համայնքը տուրիզմի տեսանկյունից դարձնել գրավիչ:

**Ռազմավարական խնդիր 4.2** Մարգահովիտ համայնքում խթանել տեղական արտադրությունը:

**Ռազմավարական խնդիր 4.3** Ձևավորել համագործակցություն Մարգահովիտ համայնքի, գործարարի և գործարարական միությունների միջև:

**Ռազմավարական նպատակ 5-րդ**

Նպաստել Մարգահովիտ համայնքի կրթական, սպորտային, մշակութային, առողջապահական սպասարկման որակի բարելավմանը:

**Ռազմավարական խնդիր 5.1** Արդիականացնել Մարգահովիտ համայնքի կրթական հաստատությունների գործունեությունը:/ մշակույթի տան և արվեստի դպրոցի վերանորոգում, գույքի և տեխնիկայի ձեռք բերում/

**Ռազմավարական խնդիր 5.2** Աջակցել երեխաների և երիտասարդների կրթությանն ու դաստիարակությանը:  
/երիտասարդների ոչ-ֆորմալ կրթության և ազատ ժամանցի կազմակերպման կենտրոն/

**Ռազմավարական խնդիր 5.3** Պահպանել և փոխանցել ազգային, մշակութային արժեքներն ու ավանդույթները:/մշակութային միջոցառումների կազմակերպում/

**Ռազմավարական խնդիր 5.4** Խթանել Մարգահովիտ համայնքում առողջապահական ծառայությունների ընդլայնումը:

**Ռազմավարական խնդիր 5.5** Ընդլայնել Մարգահովիտ համայնքի բնակիչների հանգստի և ազատ ժամանցի հնարավորությունները:

**Ռազմավարական նպատակ 6 - րդ**

Նպաստել Մարգահովիտ համայնքի բնակիչների կոմունալ սպասարկման որակի բարելավմանը:

**Ռազմավարական խնդիր 6.1** Բարելավել Մարգահովիտ համայնքի սան-հիգիենիկ պայմանները:

**Ռազմավարական խնդիր 6.2** Աջակցել Մարգահովիտ համայնքի բնակիչների կողմից օգտագործվող ջրային ռեսուրսների կառավարմանը:

**Ռազմավարական նպատակ 7-րդ**

Նպաստել Մարգահովիտ համայնքի բնակիչին մատուցվող հաղորդակցական և տրանսպորտային ծառայությունների որակի բարձրացմանը:

**Ռազմավարական խնդիր 7.1** Բարեկարգել ներհամայնքային ճանապարհները:

**Ռազմավարական խնդիր 7.2** Աջակցել միջհամայնքային ճանապարհների բարեկարգմանը: /ընդգրկելով Լերմոնտովո և Ֆիոլետովո համայնքների ներհամայնքային ճանապարհները/

**Ռազմավարական խնդիր 7.3** Աջակցել Մարգահովիտ համայնքը սպասարկող հանրային և ծառայողական տրանսպորտի արդիականացմանն ու համալրմանը:

**Ռազմավարական նպատակ 8-րդ**

Նպաստել Մարգահովիտ համայնքի բնակիչների կենցաղ-սպասարկման որակի բարձրացմանը:

**Ռազմավարական խնդիր 8.1** Ընդլայնել Մարգահովիտ համայնքի բնակչին մատուցվող կենցաղ-սպասարկման ծառայությունները:

**Ռազմավարական խնդիր 8.2** Աջակցել Մարգահովիտ համայնքի կենցաղ-սպասարկման ծառայությունների որակի ապահովմանը:

**ԾՐԱԳԻՐ 1**

Մարգահովիտ համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի **միջհամայնքային ճանապարհների բարեկարգում** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Հեղեղատարներ կառուցել:

**2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.**

2.1. Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղային տաքսիներն ավելացվեն գոնե մեկով:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 10%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Մարգահովիտ-Լերմոնտովո-Ֆիոլետովո համայնքների բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն.

Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային

ներդրումներ: Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղային տաքսիներն ավելացվեն գոնե մեկով: Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում: Համայնքի 25 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթնեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 2.0 մլն դրամ  
Կապիտալ ծախսեր՝ 180.0 մլն դրամ  
Ընդհանուր բյուջեն՝ 182.0 մլն դրամ:

## ԾՐԱԳԻՐ 2

### Մշակույթի տան հիմնանորոգում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Մարզահովիտ համայնքը դեռևս 1970-ականներին ունեցել է մշակույթի տուն, որը էական դերակատարում ուներ գյուղում մշակութային կյանքի, երիտասարդ սերնդի բազմակողմանի և առողջ զարգացման գործում: Շենքում գործում էին ստեղծագործական, մշակութային և սպորտային խմբակներ:

Մշակույթի տունը հիմնանորոգումից հետո կծառայի որպես համայնքային կենտրոն, որտեղ կգործեն մշակութային, սպորտային և ստեղծագործական այլ խմբակներ:

2012 թ. մշակույթի տան տանիքը վերանորոգվել է կառավարության միջոցներով, ինչը ապահովել է շենքի հետագա քայքայումը:

2013-2014 թթ. համայնքի միջոցներով վերանորոգվել է դահլիճը, գազաֆիկացվել է շենքը:

ՆՊԱՏԱԿ - . Բարձրացնել բնակչության մշակութային կյանքի մակարդակը,

ԽՆԴԻՐ - համայնքի շուրջ 3800 բնակչության համար կստեղծվեն հաճելի և հարմարավետ պայմաններ մշակութային և սպորտային միջոցառումների անցկացման համար

ԱՐԴՅՈՒՆՔ - վերականգնել համայնքի մշակութային և սպորտային ավանդույթները: Լուծել համայնքի մասնագետների և շնորհալի երիտասարդների ինքնագրադավաժության խնդիրը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի համար անհրաժեշտ է մոտ 40.0 մլն. դրամ, որը չի լուծվի համայնքի բյուջեի միջոցներով, ուստի պետք է





1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել մարզադահլիճի կահավորման համար անհրաժեշտ գույք:

1.2. Կահավորել մարզադահլիճը:

1.3. Ջեռուցման համակարգ ձեռք բերել:

1.4. Ջեռուցման համակարգը տեղադրել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել տարբեր մարզաձևերի համար նախատեսված մարզագույք և տրինաժյորներ մարզադահլիճի համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 10%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Մարզահովիտ համայնքի 1200 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ համայնքի 250 երիտասարդ զուրկ է մարզվելու հնարավորությունից: Ծրագրի իրականացումից հետո համայնքի երիտասարդները կմասնակցեն մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներին և կզբաղվեն առողջ ապրելակերպով: Հետագայում համայնքը հնարավորություն կունենա մարզադպրոց հիմնելու, որտեղ կմարզվեն նաև հարևան 3 համայնքների 150 երիտասարդները:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 8 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 20 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 28 մլն դրամ:

## Ծ Ր Ա Գ Ի Ր 5

### ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ

#### ԱՊԱՀՈՎՈՒՄ

#### Ծրագրի նկարագրություն

-----

Համայնքի փողոցները լուսավորված են մասնակի: 2010թ.-2012թ. համայնքի միջոցներով մի քանի փողոցներում լուսավորություն է անցկացվել: Այն փողոցները որտեղ լուսավորություն չկա մութն ընկնելուց հետո բնակչության համար վտանգավոր է տնից դուրս գալը, թե թափառող շների և թե վայրի գազանների պատճառով:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

---

Ապահովել բնակչության անվտանգությունը երեկոյան ժամերին,

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

---

Համայնքը ամբողջությամբ լուսավորելու համար հարկավոր է 6.0մլն դրամ, ինչը միանգամից համայնքի միջոցով հնարավոր չէ: Համայնքի բյուջեով յորաքանչյուր տարի կնախատեսենք գումար, առաջիկա 2 տարիների ընթացքում կունենա նք լուսավորված համայնք:

Ծ Ր Ա Պ Ի Ր 6

Խմելու ջրի համակարգի վերանորոգում

---

Անհրաժեշտ է վերանորոգել 6 կմ-անոց ջրագիծ , որից կօգտվեն մանկապարտեզը, դպրոցը, գյուղապետարանը, համայնքային կենտրոնը, արվեստի դպրոցը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

---

Ապահովել համայնքի կարևորագույն կազմակերպությունները խմելու ջրով:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

---

Ծրագրի իրականացումը միայն համայնքի ուժերով հնարավոր չէ: Ուստի հարկավոր է գտնել համապատասխան ներդրում կատարող կազմակերպություն:

Հարկավոր կլինի 5.0 մլն դրամ:

## Ծ Ր Ա Գ Ի Ր 7

### ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

---

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Արվեստի դպրոցի շենքի 1-ին հարկում գործում են գրադարանը, թանգարանը, / համայնքային գործողությունների հանձնաժողովը/ ՀԳՀ:

2-րդ հարկում գործում է երաժշտական և նկարչական բաժինները:

Շենքը վերանորոգվել է 2005թ., ունի վերանորոգման կարիք, հարկավոր է լոկալ ջեռուցում:

2005թ. շենքը գազաֆիկացվել է:

### ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐԸ

Ապահովել շենքի պահպանումը, հարմարավետությունը, բարելավել կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները, երեխաների համար ստեղծել հաճելի և հարմարավետ պայմաններ արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը:

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱԿՈՐ Է

---

Համայնքը իր միջոցներով չի կարող իրագործել ծրագիրը

Դիմել ՀՀ կառավարությանը անհրաժեշտ ֆինանսական աջակցություն ստանալու համար

Գտնել հովանավոր կամ համապատասխան ներդրում կատարող կազմակերպություն

Ծրագրի համար հարկավոր կլինի 10.0 մլն. դրամ:

## ԾՐԱԳՐԻ 8

### ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ

### ԿԱՏԱՖԱԼԿԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

---

Համայնքի տարածքում գտնվող գերեզմանատունը ունի մասնակի ցանկապատ, ինչը թույլ է տալիս որոշ անպատասխանատու անասնապահների անասունների արտոը գերեզմանատան

տարածքում կազմակերպելու, որի պատճառով տրորվում, քանդվում են հուշարձանաքարերն ու պաշտպանիչ եզրաքարերը:

Համայնքապետարանը նախատեսում է գերեզմանատան տարածքի ցանկապատում 1500 գծամետր երկարությամբ:

Քանի որ համակնքում գործում է Շիրմատուն ՀՈԱԿ-ը և բնակչությանը մատուցում է որոշակի ծառայություններ բնակիչները ցանկանում են նաև համայնքը ունենա կատաֆալկ դիակի տեղափոխման համար: Հաճախ 18 կմ հեռավորությունից մեքենա պատվիրելու համար նախ ավելի շատ վճարում են կատարում և բացի այդ երբեմն ժամանակի առումով լինում են խախտումներ: Հուղարկավորման արարողությունը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել կատաֆալկ: Այն կարող է ծառայություն մատուցել նաև հարևան երեք համայնքերի բնակիչներին:

Ծրագիրը կիրականացվի համայնքի միջոցներով առաջիկա 2017-2018 թթ.:

#### **4. Ծրագրի իրականացման համ ՀԶԾ ֆինանսավորում**

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

#### **5. ՀԶԾ մոնիթորինգ**

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

1 ԾՉՊԷԾ 9

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**ՎԻՅՈՅ. ՇՈՒՆ** – Էձձձ ՍՅ ՈՂՇ Մարգահովիտ ՆՅ ՍՅ ՍՅնում գյուղատնտեսությունը պակաս զարգացած է, վարելահողերը չմշակվելու պատճառով վեր են ածվել խոտհարքների, իսկ արոտավայրերը հեռագնա են: Գյուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում համարվում է քիչ եկամտաբեր, հին գյուղ տեխնիկան շարքից դուրս է եկել, նորը անհասի կողմից ձեռք բերելը դժվար է: Հարկավոր է օգնել գյուղացուն իր բնակավայրում ապրելու աշխատելու:

**ՎՅՅԻ ՅԻՆ** – ՀՀ կառավարության, դոնոր կազմակերպությունների, գյուղապետարանի ներդրման հաշվին նախատեսվում է համայնքում ստեղծել կոլեկտիվ, որի արդյունավետ աշխատանքի շնորհիվ (վարելահողերի կոլեկտիվ մշակման, արոտավայրերի ճիշտ օգտագործման, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, կաթնամթերքի, մսամթերքի վերամշակման գործարանի ստեղծման) համայնքում կզարգանա անասնապահությունը և հողագործությունը

**ԷՎՇՈՒՆ** – 1 ՈՅ. ՈՂ ՎՅ ԷՅ ի »ձձ շ իրականացնել տարբեր միջոցների հաշվին: Ծրագրի նախնական արժեքը կկազմի մոտ 40,0 մլն. դրամ:

**ՅՈՂՍՅՈՒՆՎՅՈՒՆ** – Ծրագիրն իրականացնելուց հետո համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը, որը կնպաստի նաև աշխատատեղերի ստեղծմանը, արտագաղթի նվազեցմանը, բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

**Ծ Ր Ա Ղ Ի Ր 10**

**Մանկապարտեզի գույքի ձեռք բերում**

---

**Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը**

Համայնքի միջոցներով 2008-2009թ.թ .կառուցվել է գյուղի մանկապարտեզը <<Սի Էյ Ք Ինթերնեյշնլ>>-ի կողմից 2009թ.կատարվել են ներքին և արտաքին հարդարման աշխատանքները: Շենքը զազաֆիկացված է, ունի լոկալ ջեռուցում: Մանկապարտեզի խոհանոցի գույքը և կահ կարասին հնամաշ է և ոչ պիտանի է հետագա օգտագործման:

Մահճակալներ կան, սակայն անկողնային պարագաներ չունենք: Քնելու հարմարություն չկա, ուստի մանկապարտեզն աշխատաում է մինչև ժամը 3-ը:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

---

Իրականացնել համայնքի երեխաների նախադպրոցական լիարժեք կրթությունը:

Երեխաներին ապահովել կենցաղի, հանգստի և խաղերի համար անհրաժեշտ միջոցներով և պայմաններով: Մանկապարտեզի համար հարկավոր է կահույք, խոհանոցային պարագաներ, անկողնային պարագաներ, խաղալիքներ:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Է

---

Դիմել շահագրգիռ մարմիններին հնարավորության սահմաններում ներդրում կատարելու համար: